

գժբախտաբար անխառն չ'ըլլար ցաւով, եւ շուտով կը ընցուի դառնութեամբ: Երկու տարի հազիւ հազ բոլորած՝ Տիկին Յովհաննէսեան ծանրապէս կը հիւանդանայ թոքային հիւանդութեամբ, որուն համար անոր բժիշկ ամուսինը կը ստիպի թողուլ Շումնան, փոխադրուիլ Վոսփորի գեղածիժաղ ափունքը, ուր քիչ ասնէն սեւ հողին կը յանձնէ իւր սրտի սիրազօղ սիրելին:

Կնոջը մահուան վրայ շատ չ'անցնիր Յակոբ պէյ ինքն ալ կը հիւանդանայ, եւ օրէ օր հիւծելով կը մաշի ու կը սպառի այն աստիւ, որով կորսնցուցած էր իւր գեռատի կողակիցը:

«Կնոջմէս վարակուեցայ» կ'ըսէ եղեր նա իւր դարմանիչ բժիշկին՝ Ստեփան Փաշային, «կնոջմէս վարակուեցայ» կ'ըսէ եղեր իւր բարեկամներուն, այնչափ գոհ եւ ուրախ սըրտով, որ լսողները, տեսնողները կը զարմանան եղեր:

33 կամ 34 գարուններ հազիւ տեսած կենաց ամէնէն գեղածիժաղ օրերուն մէջ, ոսկի երազներու եւ գաղանի յոյսերու հեշտալի ժամերուն մէջ կը թօշնի շուտով մեր նկարիչ-բժիշկը, մեծ ցաւ առթելով իւր ազգին, անմիթար սուգ պատճառելով հայ բժշկութեան, որուն չքնաղ մէկ ծաղիկն ըլլալու պատրաստուած էր:

1858 կամ 1859 թուականներուն Տոբթ. Յակոբ պէյ Յովհաննէսեան կը վախճանի անգաւակ, թողլով միայն քոյր մը եւ եղբայրներ, որք շատոնց արգէն մեկնած են աշխարհէ:

Իւր մարմինը թաղուած է եղեր Պալատի ազգային գերեզմանատունը, ուր շատերուն պէս սա ալ անյիշատակ եւ անքար կորսուած է, ո՞վ գիտէ ո՞ր անկիւնը:

Յաւալի է որ անոր կենդանագիրը չունինք, աչքի առջեւ ունենալու համար անոր դէմքը՝ որ սիրուն, գեղական, գեղանի եւ քաղցրաժպիտ էր եւ կը վերաբերէր վայելահասակ, ազնիւ սրտի տէր, վեհանձն բարեբարոյ, հեղ եւ համեստ անձի մը, ինչպէս կը նկարագրեն զինքն այսօր շատ ծերունիներ, ատենօք իրեն հասակակից եւ բարեկամ:

Կարելի է արդեօք գոնէ անոր նկարչական ձեւակերտները գտնել, կարելի է կ'ըսեմ՝ ձեռք անցընել այս բժիշկ-նկարչին վրձնին արգիւնքը, զորս այնչափ լաւ կը գծագրէ եղեր, որ բնաւ չի տարբերի բղեր բնականէ, ըստ Մարտիանոսեան ասութեան, թէ՛

Գիր ըզպատկերն
Եւ զնախատիպն առ ընթեր,
Կամ երկոքին
Քեղ կենդանիք թուեսցին,
Կամ նրկարէն
Երկաքանչիւրն համօրէն¹:

Իբրեւ վերջին բան եւ արձանական Տոբթ. Յովհաննէսեանի, կը գրեմ հոս այն տողերը, զորս իւր համարուեստ ընկերն եւ վաղեմի բարեկամը՝ Վսեմ. Տոբթ. Ստեփան Փաշա Ասլանեան, պատիւ բրած էր ինձ գրել վերջերս անոր մասին: Ահաւասիկ:

«Ազնուափայլ Տոբթ. Վահրամ Թորգոմեան.

Սիրելի Բարեկամ:

«Յակոբ պէյ Յովհաննէսեանի վրայ հակիրճ տեղեկութիւն գտայ կենսագրութեանս մէջ ի շարս իմ նշանաւոր ընկերակցաց ի կայսերական վարժարանի բժշկութեան 1842—1847, որ ահաւասիկ:

«Յակոբ պէյ Յովհաննէսեան, այս ալ Բարունակ պէյի նման ի ճեմարանէ ուսեալ եւ յաջողակ ի գծագրութեան, մէքթէպէն քիչ մը ուշ ելաւ, եւ վերջը կրկին մտաւ իւր գծագրութեան դասատու, երբ միանգամայն Ս. Փրկչի Հիւանդանոցին բժշկապետի պաշտօն կը վարէր:

«Շատ խոնարհ անձ մըն էր Յակոբ պէյ, հեղ եւ խոնարհ, որով սիրելի էր ամէնուն, բաց ի այն ժամանակի Հիւանդանոցի Հոգաբարձունքէն, որ կերեւի թէ մարդու հետ չ'կրնալ վարուելու մենաշնորհն ունէին եւ կը վայելէին:

Իսկիւրասար, 10/22 Նոյեմբեր 1898:

Չերդ յարգմտօր
Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

Ասուպի մը պէս երեւցած է Տոբթ. Յովհաննէսեան, ասուպի մը պէս ալ անհետացած, ասանկներու համար կ'արժէ կրկնել Մալէրպի սա սրտառուչ խօսքը՝ թէ,

Ըզկենցաղ վարդից կենցաղեալ վարդն այն,
Ո՛չ յերկարակեաց քան ըզվաղորդայն:

Բնոս, Կ. Պոլսոյ, 12/24 Նոյեմբեր 1898:

Տոբթ. ՎԱՀՐԱՄ Ե. ԹՈՐԳՈՄԵԱՆ

¹ Ապղերիոս Մարտիանոս Լատին բանաստեղծին գրածը. Տես Ուօլէնի հետազոտութիւնք հասար 9: էջ 174:

